ՆՈՐ-ՕՐ

№ 168 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 11 Հոկտեմբերի 1889 Չորեքշաբթի 11 Հոկտեմբերի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 168

Տարին 10 թուղթի, վեց ամիսը՝ 6 թուղթի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., հատը՝ 5 կոպեկ։
Ամենայն գրություն պիտի ուղղել միայն խմբագրատանը։

Խմբագրությունը հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի սուրբ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարությունների գնահատությունը 2 կ., բերկաճների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր Նամակ խմբագրութեան։
Թղթակցութիւններ.—Ս. Էջմիածին։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Երևկոյեան հեռագիրներ։
Բանասիրական.—Անարդար պահանջ (շարուն.)։
Տնդեկատու։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Երեքշաբթի, հոկտ. 10-ին, կէսօրը անց, բանականին բաղմութիւն էր հաւաքուել քաղաքիս Գօլովինսկի պրօսպեկտի վրայ, Վռովսկիանների ժագաղինի առաջ, և տպաւորիչ վիճակ էր մի դէպքի մասին, որ հենց նոր էր կատարուել։ Թիֆլիսում հրատարակուող ռուս «Тиф. Лист.» թերթի գլխաւոր աշխատակից պ. Իվան Խաչատուրովը դուրս է գալիս, ինչպէս հաղորդում են մեզ, նահանգական դատարանից և հենց դատարանի դրան մօտ հանդիպում է նրան Մերեթլևի ազգն Այս վերջինս պ. Ի. Խաչատուրովին ասում է, թէ «ինչու ինձ դէմ բաներ ես գրում...» պ. Խաչատուրովը հեռագիր ասում է և դրա փոխարէն ստանում է մի ապտակ։ Այնուհետև Խաչատուրովը գրպանից հանում է տրճանակը, իսկ Մերեթլևին, տրճանակը տեսնելով հանում է տորը և խիստ Խաչատուրովի կռան, այնպէս որ տրճանակը վայր է ընկնում, իսկ տուրը, որ բաւթ է լինում, կոտրւում է։ Ականի զրգռուած այդ կուսից՝ Մերեթլևին նորից ապտակում է Խաչատուրովին այնպէս ուժով, որ գետնի վրայ է ընկնում. կուրը ծաստանում է, հարուածները կրկնւում, ուրիշ իշխաններ հաւաքւում են և, ինչպէս ականատեսները պատմում են, պ. Խաչատուրովի բանը չատ վատ կվերջանար, եթէ Դավլեթեան եղբայրները պ. Խաչատուրովին իրենց մագազինը մտցնելով չազատէին նրան։

Հարկաւոր ենք համարում մեր ընթերցողներին ծանուցանելու, որ մեր պատմած դէպքը առաջին անգամն չէ. նոյն իսկ մի քանի օր առաջ բանկային թաղրանի ֆոյէում պ. Վ. Մամիկոնեանը հանդիպելով պ. Խաչատուրովին ապտակեց նրան։

—

Բաւական երկար քաշեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան վէճը՝ անդրկովկասեան երկաթուղու չինութեան մի ջոցին գործածուած քաղաքային հողերի մասին։ Խնդիրը 70,000 րուբլու հողի մասին է։ Անդրկովկասեան երկաթուղին կառավարութեան ձեռքն անցնելով, այդ խնդիրը կրկին յարուցել է։ Անցեալ չաբաթ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի պահանջելով, Թիֆլիսի պ. քաղաքագլուխը ներկայացրել է պ. նահանգապետին լրացուցիչ տեղեկութիւններ։ Այդ տեղեկութիւնները, տեղական թերթերի տեսնելով, պ. նահանգապետը ներկայացրեց կառավարչապետին, իսկ վերջինս ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան։

—

Կիրակի, հոկտ. 8-ին, քաղաքիս մօտ, Դիդուբէ կոչուած դաշտում ձիարշաւ էր։ Օրը գեղեցիկ էր, մեծ բազմութիւն կար. ներկայ էր կառավարչապետի օդնական գեներալ-ադիւտանտ՝ Ս. Ա. Շէրէմետիևը, իշխան Սվատոպօլկ-Միրսկին, պ. նահանգապետը և ուրիշ բարձրաստիճան անձեր։ Առաջին ձիարշաւի համար նշանակած էր մրցանակ 600 ր., ձիերը պէտք է լինէին Ռուսիայի կայսերական ծնունդ, տարածութիւնը 6 վերստ։ Երկու ձի էին դուրս եկել, մէկը՝ «Բանկ», որ պատկանում է իշ. Ախալո-տուգալովին, միւսը Բերզի «Ռօզեալ-Մէյր»-ը։ Մրցանակը տարաւ վերջինս, որ 6 վերստ տարածութիւնը 10 րոպէ 22 վայրկենում անցաւ, միւս ձին մի քայլով միայն յետ մնաց։ Երկրորդ արշաւի մրցանակը 450 րուբլի էր, ձիերը պէտք է տեղական լինէին, տարածութիւնը 3 վերստ։ Երեք ձի դուրս եկան. «Ադդակ» իշ. Ախալո-տուգալովինը, «Մարկիզ» Կարանդեզովինը և «Ջէլրան» իշխան Նակաշիձէինը։ Մրցանակը տարաւ «Մարկիզը»։ Երրորդ արշաւանքի մրցանակը 450 րուբլի էր, նոյնպէս Կովկասի ծնունդ ձիերի համար։ Դուրս եկաւ Այդամիրովի «Էլ-հաքիմ»-ը և Զուլղասարովի «Խօսրով»-ը։ «Էլ-հաքիմը» տարաւ մրցանակը։ Չորրորդ արշաւի համար նշանակած էր 400 րուբլի մրցանակ Ռուսիայի ծնունդ ձիերի համար, տարածութիւնը 2 վերստ 133 սաժէն։ Դուրս բերուեցին «Մարթա» Այդամիրովինը, Բերզի «Միչտան», Կարանդեզովի «Ջիմիկինդը», Տուգալովի «Վհատալկան»։ Այս վերջինս տարաւ մրցանակը։ Վերջին ձիարշաւը ջենտլմէնների ձիարշաւ էր արդէլքներով։ Թիֆլիսի ձիարշաւի ընկերութիւնը դրա համար նշանակել էր մրցանակ արծաթէ անօթներ։ Երկու ձի դուրս բերեցին. Կարանդեզովի «Սախչի-օղլի» և Նատալիչի «Բօզալհանն «Սախչի-օղլի» տարաւ մրցանակը։ Միւս ձին առաջին արդելքի մօտ կանգ առաւ և չկամեցաւ առաջ գնալ։

—

Երկուշաբթի, հոկտեմբերի 9-ին «Մուսայիդ» այգում կատարուեց չերամապահական գլխաւոր կայարանի չինութեան հիմնարկութեան հանդէսը՝ երկրիս կառավարչապետ, պետական կալուածների պ. մինիստրի և ուրիշ բարձրաստիճան անձերի ներկայութեամբ։ Շէնքը նախատեսւում է 54,000 րուբլու

—

Կիրակի, Կովկասեան ցուցահանդէսում պատրաստւած պ. Վասիլչագինը մի դասաիսոսութիւն արեց և մեծ գովասանքով խօսեց Կովկասեան պանրի մասին՝ միանգամայն ցաւ յայտնելով, որ մի առանձին առաջադիմութիւն չէ երևում այդ ճիւղում, մինչդեռ Կովկասում դա կարող է խիստ ախորժելի դիրքացի էլ զբաղում է դրանով։

—

Անդրկասպեան երկաթուղու վարչութիւնը հոկտեմբերի 15-ին արդէն բոլորովին անցած կը լինի կառավարութեան ձեռքը։

—

Թիֆլիսում, Միքայէլեան փողոցում չատով կը բացուի ասսինձի (կրամական) գործարան, որի համար հարկաւոր գործիքներն արդէն առացուած են։

—

ԹԵԼԱՒԻՑ.—Այսուհետև նոր պրիստաւ Աւետիքեանի աշխատութեամբ այսուհետև էլ կիրակի օրերը խանութները փակուած են։ Յանկալի էր, որ Նորամուտ կարգը չարունակ պահպանուէր և մեր նոր պրիստաւը ինչպէս սկսել է քաղաքի մաքրութեան վրայ հսկել, նոյն եռանդով չարունակ գործել։

—

Նիկոլայեւսկ Քութայիսի նահանգի մի քանի տեղերում անասնային հրդեհներ են ծագել Բաչինեան գաւառում, Նիկոլո-Ծմինդեան անասնաբաժնի մօտ այրւում է անտառը։ Սենակի գաւառի Խօրդի գիւղում այրւում են Մինդրէլիայի իշխանի և Զիկօանի իշխանի անտառները։ Շաթօպանի գաւառում, Մարելիսի կայարանին մօտ այրւում եմ Եչիմսկու և Լ. Ս. Խարլովի անտառները։ Հրդեհը հանգցնելու համար, ըստ տեղւոյն, տեղական թերթերի տեղեկութեամբ, կանչուած են տեղական բնակիչները, բայց հաղիւ թէ կարող լինին նրանք հրդեհին արգելք լինել։

—

ԴԱԼՄԱՏԻԱ. — «Նոր-Դար»-ի մէջ զանազան կողմերից հաղորդեցին Ժանտախտից կենդանիների կոտորուելու լուրը։ Այսօր մենք ինքներս ականատես ենք նոյն երևոյթին Դալմատիայի կայարանից Ներկն՝ հիւսիս-արև. Լեան կողմում գտնուող հայաբնակ և թրքաբնակ Սարով գիւղում. անասունների ժանտախտից կոտորուածների լեշերը փռուած են գիւղի այս ու այն տան եւ տան առաջի պարտէզների չափարների եւ։ Օր չէ պատահում, որ մէկը երկուսը կաչին քերթելով դուրս չգան գիւղի նեղ փողոցներում։ Լեշերի վրայ թափուած չնչերի կուռից հաղիւ թէ գիւղի ժողովուրդը կարողանում է փախչելով ազատուել։ Գարշահոտութիւնն օդը ապականել է, այնպէս որ գիւղից քառորդ վերստ հեռաւորութեամբ լեշերի ապականիչ օդը մարդկանց գալի է լինում։ Հենց այդ է պատճառը, որ գիւղի բնակիչները ջերմ ու անդից ազատուել չեն կարողանում. Որվ է ուշադրութիւն դարձնում այդ մասին՝ թէև տրամադրած է, որ սահման անասունն առանց քերթելու գետնի մէջ ամփոփուն և անչհատացնեն։

—

ԲԱԳՈՒԻՑ պարոն Դաւթեանը գրում է մեզ.—«Աղքատաց խնամող հոգաբարձութիւնս ստացաւ հայր Խորէն ամագ քահանայի ձեռամբ հանգուցեալ Սահակ Լալայեանցի տարեկիցին հայ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՐԴԱՐ ՊԱՀԱՆՋ *)

(Պատկերներ վրէժական կեանքից)

—

Հարևանների խօսքերն, ըստ երևութին, ոչինչ ազդեցութիւն չարին գղրի վրայ։

—Չէ, կարալ չեմ, խրոխտ, բայց կեղծ ձայնով պատասխանից գղրը. կարալ չեմ. դրան պէտք ա լինէ ձընդնչդցնել տամ՝ դա հէլա լինէ լաւ չի ճնանչըմ, մկնար[1]) վէնն (ոտն) էդ ոճ հետ ա մեղնըմ (ձգում)...

Ջայրի այս ամբարտաւան խօսքերն ընդհատեցին Հանէսի լուութիւնը՝ զայրացնելով նրան։

—Թող արէք գնայ, թող արէք կորչի՝ մի տենամ ինչ ա անելու ինձ,—գոռաց նա գէպի հարևանները։

—Դէ լաւ ծէնդ կորի, սարսապ. ասած ա թէ մինչև տիրոջ գալն՝ լծի մորթին լողալովը հանեցին։

—Ի՞նչ գնն անել ինձ՝ հու մարթիլու չին, պատասխանից Հանէսը, բայց այժմ նկատելի էր նրա ձայնի մէջ երկիւղի նշան։ Այդ աւելի երևեց այն ժամանակ, երբ նրա կնի Խաթունը մօտեցաւ իւր մարդին և, կամաց, վշտահար ձայնով ասեց նրան։

*) Տես «Նոր-Դար» № 167.

[1]) Արդեօք։

կանում է, հարուածները կրկնւում, ուրիշ իշխաններ հաւաքւում են և, ինչպէս ականատեսները պատմում են, պ. Խաչատուրովի բանը չատ վատ կվերջանար, եթէ Դավլեթեան եղբայրները պ. Խաչատուրովին իրենց մագազինը մտցնելով չազատէին նրան։

Հարկաւոր ենք համարում մեր ընթերցողներին ծանուցանելու, որ մեր պատմած դէպքը առաջին անգամն չէ. նոյն իսկ մի քանի օր առաջ բանկային թատրոնի ֆոյէում պ. Վ. Մամիկոնեանը հանդիպելով պ. Խաչատուրովին ապտակեց նրան։

—

Բաւական երկար քաշեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան վէճը՝ անդրկովկասեան երկաթուղու չինութեան մի ջոցին գործածուած քաղաքային հողերի մասին։ Խնդիրը 70,000 րուբլու հողի մասին է։ Անդրկովկասեան երկաթուղին կառավարութեան ձեռքն անցնելով, այդ խնդիրը կրկին յարուցել է։ Անցեալ չաբաթ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի պահանջելով, Թիֆլիսի պ. քաղաքագլուխը ներկայացրել է պ. նահանգապետին լրացուցիչ տեղեկութիւններ։ Այդ տեղեկութիւնները, տեղական թերթերի տեսնելով, պ. նահանգապետը ներկայացրեց կառավարչապետին, իսկ վերջինս ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան։

—

[1]) Աղմուկի, ցաւի։
[2]) Կը կառավարուենք։
[3]) Բամբասանք։ [4]) Ուրիշին էլ սակայն՝ գործածութեան տեղիցն է կախուած. մի ուրիշ տեղ էլ նշանակում է ամբոխ։

—Է՛հէյ, բարըշիւ. անակր մնայ սինին. մի սինու մնալ գլուխդ գալմագալի [1]) մէջ մի գցելու Խ՞մը չի, Քող իրան տանի, ուզում չեմ. մենք առանց սինու էլ հօլա կը գնանք՝ [2]) Առաջ զորմած ա։

Մինչ այս հաւատարիմ ուղեկիցի ցաւակցական խօսքերը Հանէսին գրգռացրին. վերջինս, բոլշեպէս կանգ առնելով կնոջ ասածների վրայ, հասաւ այն եզրակացութեան, որ կարող էր ինքը չարաչար պատժուել այդ պատճառով լաւ համարից լուել։ Նա անդգայօրէն հետ-հետ արաւ իւ ալրի ջուալի վրայ նատեց, որ մի տակին ցից էր դրած։ Նստելը մի քիչ Հանէսին հանգարտեցրեց։ Տհաճելով Հանէսի փափկանալը, գղիրը նորից սիրտ առաւ՝ չնաքղոլի ժամանակ տէրը բռնած չան նման. նա սկսեց իւր ձայնն աւելի ևս բարձրացնել։

—Էդ զայրնի աչքը միչտ պէտք ա վըխծնես (վախեցնես), թէ չէ չատ բան կանի։ Մենակ հու էս չի։ Տենըմ ես՝ տուր-ընդուր նատըմ ա քեօխուի, սուդիի վիհըլն անըմ՝ [3]) խալխին [4]) էլ չնացըներմ. Ա՛յեր, սրանից առաջ էն ով էր տեհած, որ սրա պէսները խօսի՞ն (խօսէին), հմի ամեն մինը մի ասան ա դառել... Եաւաշ հէլա մի... ծեր գլուխը մի հենց օյին պիրեն—դարձաւ դէպի Հանէսի կինը էլ, այն էլ՝ ուրիշների ներկայութեամբ։ Այս արդէն չարթնութեան նշան էր համարում գղիրը. երևի այդ էր պատճառը, որ նա, գլխելով հարևանների խնդրին, կանգնեց։ Հարևաններից մինը —Ընըզանդանց Անդրիասը—խնդրելով, ասեց.

—Արթին չան, քե մատաղ, լինչ որ սաի՝ լաւ, մոռացի, ան, սինին էլ ան, տար իրանց տուր, բալքի (գուցէ) քեասիբի սինով աչքերնին կչտանայ։

Գղիրը սինին առած դուրս գնաց, բայց թէ նա ինչպէս էր չարժել Հանէսի հարևանների խնդիրը,—այդ յետոյ երևնց։

V.

Գիւղացիների ծաղրը Հանէսի պառը.—Սարի չոր ու ելեւ էջան առաւօտները։

—

Գղիրը սինին ձեռին տանից դուրս եկաւ ու՝ բարձր ձայնով Հանէսի հայհոյանքները թափելով՝ հեռացաւ, դնաց։ Նրա ձայնի վրայ չատ շներ հաւաքուեցին. բարկութիւնից սրան-նրան կլանչացնելով՝ գղիրը չարունակեց իւր ճանապարհը։ Շների կլանչոցն ու գղրի ձայնն իրար ընկած՝ ահագին աղմուկ առաջացրին, որ, աշնանային գիշերուայ մթութեան մէջ աւելի այժ ստանալով՝ տարածուեց մերձակայ ձորերի ու անտառների մէջ, բազմաթիւ արձագանգներ տալով։ Այս աղմուկի վրայ գիւղացիներից չատերը թարժած [1]) [illegible]

[1]) Քնած տեղից զարթնելով։

ներից զուրս եկան իմանալու, ինչ իրար է. նրանցից մի քանիսների ականջին դիպան գղրի հետևել խօսքերը։

—Սոված չան տղայ... դու հլա նրա սրտին մտիկ արա. ասում էլ ա թէ՝ ինձանից խի չեն հրցրել։ Մի ասող՝ լի ոտ չուն ես, ոտ թուլէն ես, որ քեզանից բան հրցնեն. քե պէմանրին ով ա մանգալի... էն ով ա ասողը՝ թէ էդ որդի ես կապում [1]). Տալ չեմ։ Բա խի տուիր։ Հըւատա հլա քե պէմանրին են տուել,—ասում էր ինքն իրեն գղիրը։

—Ա՜, էս ոտ հետ ա Քաչալն էս կէս գղերին բիւրեչութին անըմ, ասաց գիւղացիներից մինը։

—Ն՝ախ. տէյ թէ Գըրգեսի (Կիրակոսի) տղայ Հանէսի հետ՝լի՝ ձէնն էն գղէն (կողմից) ա գալի. էդ կողմէն էլ ով կայ,—դէն ա Հանէսն ա, էլի, պատասխանից միւսը։

—Ա՜, խի չէք գալի գնանք, մի տանք էդ ինչ խաբար ա, առաջարկեց մի երրորդը։

—Կարալ չեմ՝ ջարդուած եմ, ուզում էք, գնացէք, պատասխանից առաջիններից մինը։

Երբ, վերջապէս, գղրի ձայնը կտրուեց ու կամաց-կամաց գիւղում սիրեց լռութիւն, մի քանի հոգի, հետաքրքրութիւնից չարժուած, գնացին Հանէսի տունն՝ իմանալու բանի էութիւնը։ Այստեղ ժողովականների թիւն արդէն տասնից չանց էր։ Հաւաքուած գիւղացիներն իրար հետ

[1]) Այսինքն՝ քեզ ով է մարդի տեղ դնողը։

ՎԱՃԱՌՎԻ — Կիրակի առտու 10-ին, Վառոսի գործարանի մոտ, 350 ձ. ոտնաչափ տարածութեան վրայ, 20—24 տարեկան 350 տղայ ու աղջիկ հաւաքուած էին Նիկոլայ Հովհաննիսեանի եւ Ներսէս Ներսիսեանի վաճառատան առջեւ։ Ամէնքն ալ ուրախ էին, որովհետեւ այսօր Ս. Յարութիւնն էր, եւ ամէնքն ալ հագած էին իրենց նոր հագուստները։ Ամէնքն ալ ձեռքերնին ունէին ներկած ձուեր, որոնք կը ծեծէին իրարու հետ։ Ամէնքն ալ ուրախ էին, որովհետեւ այսօր Ս. Յարութիւնն էր, եւ ամէնքն ալ հագած էին իրենց նոր հագուստները։ Ամէնքն ալ ձեռքերնին ունէին ներկած ձուեր, որոնք կը ծեծէին իրարու հետ։

— Ես ունիմ 10 կարմիր ձու, — կը պարծենար Ներսէս Ներսիսեանի որդին Ներսէսը։

— Ես ալ ունիմ 10 կարմիր ձու, — կը պատասխանէր Ներսէսին Հովհաննիսեանի որդին Յովհաննէսը։

— Ես ալ ունիմ 10 կարմիր ձու, — կը պատասխանէր Յովհաննէսին Ներսէսը։

— Ես ալ ունիմ 10 կարմիր ձու, — կը պատասխանէր Ներսէս

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ի. Տ.-Ի-ին.

Ձեր նամակը ստացանք, որի համար շնորհակալ ենք։ Ինչ վերաբերում է Ձեր հարցին, ապա մենք կարծում ենք, որ Ձեր ենթադրությունը ճիշտ է։ Ձեր նամակը կհրատարակենք։

Ա. Ա.-ին.

Ձեր նամակը ստացան

բանն է «քիչ դարման, բայց չատ ցավին»։

*** Ամերիկայի քաղցրեղէնների մի դարձարանատէր մտաք է յղացել «ուտելու լրագիր» հրատարակել։ Թերթը պատրաստում է իսմորից և չատ համով է. վրան հեղուք դարձրած չօկոլադով տպում են օրուայ նորութիւնները։ Թերթը կարդալուց յետոյ՝ ուտում են։

*** Ուէստմինիստերի հերցոգ Բօկաուն իր «Օրմոնդ» հոչակաւոր ձին 14,000 ֆունտ ստերլինգով ծախել է մի Բուէնոս-Այրէսցու։ Այդպիսի մեծ գին ոչ մի ժամանակ ձիու համար վճարուած չէ։

*** Լօնդոնում աճուրդի միջոցին 1500 ֆրանկով ծախել են XVIII դարի մի վաթսէմ խաղաթուղթ, որի վրայ նկարները ներկայացնում են ժամանակակից անցքեր և պատկերներ, որոնք վերաբերում են անգլիական Աննա թագուհուն։ Խաղաթղթերի վրայ նկարած են Մալբորրի յաղթութիւնները, այն ժամանակուայ ծովային պատերազմները։ Աննա թագուհին ներկայացրած է «սրտի տիկինն», նրա ամուսինը՝ դանիական պրինց Գէօրգը՝ «սրտի թագաւոր». դանիական թագուհին՝ «քարփինչի տիկինն», պրուսական պրինցէսը—«վաչչի տիկինն»։ Միւս նկարների վրայ ներկայացրած են այն ժամանակուայ պետական անձերին։

*** Ուիլիամ Գլադստօնը, ինչպէս հաղորդում են անգլիական թերթերը, կրկին սկսել է մեծ եռանդով.... փայտ ջարդելը։ Նա իւրաքանչիւր օր մօտ 3—4 ժամ չարունակ կայնով փայտ է ջարդում և չէ յոդնում։ Ականատեսները զարմանում են այդ ծերունու ֆիզիկական ոյժի և ճարտարութեան վրայ։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Հէ–սիսայէն. գործակալու–ներ–նէյ)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 հոկտեմբերի.— Օգեսսայի ժամանակաւոր գեներալ նահանգապետութեանը յարձակուած լինելով, որով և գեներալ Բօսպէն պաշտօնից արձակուած լինելով, Թագաւոր Կայսրն առանձին հրովարտակով անկեղծ շնորհակալութիւն է յայտնում գեներալ Բօսպին նրա բոլոր արդիւնաւէտ աշխատութիւնների համար՝ լիշեալ գեներալ-նահանգապետութեան մէջ։

ՍԹԵՆԲ.— Թագաժառանգը յուներ թագաւորին չորս պատուական ձի նուիրեց։

ՊԱՐԻԶ.— Կօքուրգեան պրինց Ֆերդինանդը Լօնդոն ուղևորեցաւ։

ՇՏՈՒՏԳԱՐԴ.— Ինչպէս լսւում է, թագաժառանգին սպանելու փորձ անողն ամենևին խելացնոր չէ. Կլայբէր ազգանունը նա իրենից է հնարել։ Ծողովուած տեղեկութիւններից երևում է, որ յանցագործն առաջուայ ցուցմունները փոխել է՝ Վիրտեմբերգին կաթոլիկ թագաւոր հարկաւոր լինելու մասին։ Նա յայտարարում է, որ ոչնչական ընկերակցութեան է պատկանում. պրինց Վիլհելմին սպանելու վճռակն իրեն էը դուրս եկել յանցագործի ասելով։ Այդ գործի մասին դեռ պաշտօնական տեղեկութիւնները չեն հրատարակուած։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Թիֆլիսի կողմերի ուսումնարանի անտեսական բաժնում աճուրդ է նշանակուած կալալով տալու համար։

Բ. Հոկտեմբերի 14-ին, մինչև 200,000 հատ սալիտակիղէն լուանալու (2800 ր. գն.) և 1306 ր. 50 կոպէկի դասական պէսայքներ և կանցէլարիային իրեր մատակարարելու գործը։

Գ. Հոկտեմբերի 17-ին, լուսաւորելու նիւթեր (նաւթ մինչ 600 պուդ, պատրոյկ մինչև 290 արշին, լամպարի ապակի 957 հատ և այլն, բոլորը 764 ր. 5 կոպէկի գնահատուած) և 960 հատ պատուհանի ապակի դնելու (306 ր. 15 կ. գն.) գործը։

Դ. Հոկտեմբերի 19-ին, 2168 ր. 58 կոպէկի նոր չոր կարիլու և հինը կարկատելու, 355 հոգու նոր կօշիկ պատրաստելու և հինը նորոգելու (3927 ր. 10 կ. գն.) և բայլդներ մատակարարելու (681 ր. 22 կ. գն.) գործը։ Ցանկացողները պէտք է յիշեալ յանձնաժողովին նոյեմբերի 8-ին Կովկասի վիճակային չրջանային խորհրդում աճուրդ է նշանակուած 1890/1 թուին մատակարարելու համար Պետրովսկի մթերանոցին 20,549 չետվէրտ ալիւր, 2648 չետվէրտ ձաւար և 250 հատ խոիր, Դերբենդ՝ 2727 չ. ալիւր, 397 չ. ձաւար, Բագու՝ 2905 չ. ալիւր, 384 չ. ձաւար, Ուզուն-Ադա՝ 19,654 չ. ալիւր, 6706 չ. ձաւար և 8000 հատ խոիր, Ֆօրտ Ալէքսանդրովսկ՝ 816 չ. ալիւր և 146 չ. ձաւար։

«Նոր-Դար»-ի Օրացոյց.

1889 Թ. Գ.	Հոկտեմբ. 31 օր.	ՏՕՉԱՍ Հայկ. Թ.

11 Դշ. ակ.—Լ.ս. 28. Ն. Տ. Հոկ. 23. Սահմի 2.

12 —Նշ. բձ.—Լ.ս. 29. Ն. Տ. Հոկ. 24. Սահմի 3. տօն Եպրաքսէ կոյսի։

13 —Ուր. րկ.—Լ.ս. 30. Ն. Տ. Հոկ. 25. Սահմի 4. Ծն. Ն. Կ. Բ. Միխայիլ Նիկօլայեւիչ։ Ծն. լս. ամպամած և անձրևային՝ տեղ-տեղ։

14 —Սբ. գձ.—Լ.ս. 1. Ն. Տ. Հոկ. 26. Սահմի 5. Տօն մեր ս. Մեսրոպի, Եղիշէի, Մովսէսի, Քերթողի, Դաւթի Անյաղթի, Գրիգոր Նարեկացու և Ներսէս Կլայեցու տօն։

15 —Կիր. գկ.—Լ.ս. 2. Ն. Տ. Հոկ. 27. Սահմի 6.

16 —Բշ. պձ.—Լ.ս. 3. Ն. Տ. Հոկ. 28. Սահմի 7.

17 —Գշ. գկ.—Լ.ս. 4. Ն. Տ. Հոկ. 29. Սահմի 8. Անանիայի, Մատթէի, Բառնաբայի, Փիլիպպոսի, Յովհաննու առաքելոց տօն։

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ՕԴԵՍՍԱՅԻ ՄԻՋԵՒ

Օդեսսայից Բաթում գալիս է

Զ ո ր ե ք շ ա բ թ ի, առ., ուղիղ գծով կէս և նավօրօսիյակի վրայից։

Ո ւ ր բ ա թ, երեկոյեան, շրջանառու ընթացքով։

Կ ի ր ա կ ի, առ., կ. Պօլսից։

Բաթումից գնում է Օդեսսա

Ե ր ե ք շ ա բ թ ի, երեկոյ. 4 ժ., ուղիղ գծով. մտնում է Սուխում և Նովօրօսիյսկ։

Չ ո ր ե ք շ ա բ թ ի, երեկոյ. 4 ժ., ուղիղ գծով, մտնում է Նովօրօսիյսկ։

Շ ա բ ա թ, երեկոյ. 8 ժ., շրջանառու ընթացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Կ ի ր ա կ ի, երեկոյ. 8 ժ., արտաքսահանման գնացքով Կ. Պօլիս։

Բաթումից գնալիս Սուխում և Նովօրօսիյսկ հանդիպող նաւերը դուրս են գալիս Նովօրօսիյսկից երեկոյ. 9 ժ., երկաթուղու գնացքին համաձայնելով։

Փօթիից Բաթում գնում է

Ե ր ե ք շ ա բ թ ի, առ. 9 ժ., տանում է Ղբիմ-Կովկասեան նաւին, որ Սուխում է մտնում։

Ո ւ ր բ ա թ, եր. կամ գիշերը Ղ.-Կով. նաւին։

Շ ա բ ա թ, առ. 9 ժ. Ղ.-Կով. և Բուլկլա-Անատօլուի նաւերին։

Բաթումից Փօթի գնում է

Չ ո ր ե ք շ ա բ թ ի և կ ի ր ա կ ի, ժամը բաթումում է որոշուած։

Բացի այդ Փօթի գալիս են Օդեսսայից և Ղ.-Կով. նաւահանգիստներից երեքշաբթի լուսածէգին և չորեքշաբթի բաթում գնում, որտեղից ուղիղ գծով Սև ասատօպօլ-Օդեսսա գնում. նոյնպիսի նաւեր ուրբաթ երեկոյեան դուրս են գալիս բաթումից, նոյնպիսի նաւեր բաթումից Փօթի են գալիս հինգշաբթիներ, առ. և Փօթիից Սուխում գնում ուրբաթ երեկոյեան։

Յամադրեալ երթևեկութիւն Թիֆլիսի և Վլադիկաւկազի միջև։

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող էքիպաժը—առաւօտեան 7 ժ., գիշերում է Գուդաուր կայարանում, միւս օրը երեկ. 5 ժ. հասնում է Վլադիկաւկազ։

Հինգ հոգու տեղ ունեցող էքիպաժը—առ. 9 ժ., գիշերում է Մլեթի կայարանում. Վլադիկաւկազ հասնում է միւս օրը առ. 8 ժ.

Վէց հոգու տեղ ունեցող օհիքոասը—երեկ. 4 ժ. և առանց գիշերելու միւս օրը երեկ. 7 ժ. հասնում է Վլադիկաւկազ։

Վէց հոգու տեղ ունեցող օհիքոասը—երեկ. 5 ժ. և առանց գիշերելու միւս օրը երեկ. 8 ժ. հասնում է Վլադիկաւկազ։

Վլադիկաւկազից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող էքիպաժը—առ. 7 ժ., գիշերում է Պասանաուր կայարանում և միւս օրը երեկ. 6 ժ. հասնում է Թիֆլիս։

Հինգ հոգու տեղ ունեցող էքիպաժը—առ. 9 ժ., գիշերում է Մլեթում, միւս օրը եր. 7 ժ. հասնում է Թիֆլիս։

Վէց հոգու տեղ ունեցող օհիքոասը—երեկ. 4 ժ. և առանց գիշերելու միւս օրը կր. 7 ժ. հասնում է Թիֆլիս։

Վէց հոգու տեղ ունեցող օհիքոասը—երեկ. 5 ժ., ճանապարհին գիշերելու չէ մնում և միւս օրը երեկ. 9 ժ. 50 վ. հասնում է Թիֆլիս։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԷՖԻՐ ԵՒ ԿՈՒՄԸՍ

Մի չէշը 25 կոպէկ, կէս չէշը 15 կոպէկ. աշակերտողների համար աբօնէնտով 10% զիջում կը լինի։ Երևանեան հրապարակ, Զուբալովի տուն, Օ. Կօբօնայի խանութը։

(Է) 5—4

ԿՈՎԿԱՍԻ ԿԱՐՏԷԶԸ

Րէլիէֆ պատրաստած՝ մինչ պարսից Ուրմա և Թաւրիզ և Թիւրքիայի Սամսոն և Սիվազ քաղաքները։ Մասշտաբը հորիզոնական կողմից 40 վերստ է, իսկ ուղղահայեաց— 4 վերստ դիւյմերով։ Կարտէզի մեծութիւնն է 17½ վերշոկ, լայնքը 16½ վ., կշիռը 30 ֆունտ։ Գինն է 110 ր., ուսուցնարանների համար 100 րուբլի։ Կարելի է տեսնել ցուցահանդէսում։

4—4

ԴԱՆԻԱ

Հիւրանոցը բացուած է Թիֆլիսում սոյն տարուայ փետրուարից, Գօլովինսկի պրօսպէկտի վրայ, Զիլթախեանի տանը, իւր բոլոր յարմարութիւններով։ Գները 50 կոպէկից մինչև 5 րուբլի։ Ամսականով զիջում կը լինի։

(Թ) 6—5

ԹՈՒՉԻ-ՊՂՆՁԻ ԶՈՒԼՈՒՐՅԱՆ ԲԱԳԻՈՒՄ

ԳՈՒՍՏԱԻ ԼԻՍՏԻ

Շոգեկաթսաներ, ըէզերվուարներ, ամեն տեսակ կաթսայի գործեր, վագօն-ցիստէրն, արանոմիսիա ջրբաղացների և գործարանների համար, շոգեշարժներ և այլն։

8—4

ԻՒ. Ն. ԿՐԷՅՉՄԱՆԸ

Երաժշտութեան դասեր է տալիս. ստորին դասարանի երթևեկներին շաբաթական 2 դաս՝ ամսական 8 րուբ., շաբաթական մի դաս—ամսական 5 ր.։ Բարձր կուրսերի երթևեկ աշակերտների համար շաբաթը երկու դասի համար՝ ամսական 10 ր., մի դաս՝ 6 ր. ամսական։

Սօլօլակի փողոց, տուն Գուբգէնովի. ընդունելութիւնը ժամը 11-ից մինչև 1-ը։

(Գ) 4—4

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՂՔԵՐ»

հրատարակած՝ օհանակամտութեամբ իրենց ջրային կազմուածքը խանգարածների համար։

Հեղ. Դ-ր Լօրէնցէ

ուսումնարկն հրատարակութիւն Դ-ր Բ-լի

Գինն է 1 րուբ.

Այս օգտակար գիրքը պարունակում է իւր մէջ չատ խրատներ, թէ՝ ինչպէս կարող են ազատուել հիւանդներն վերոյիշեալ ախտի վնասակար հետևանքներից և վերականգնել խանգարուած ոյժերը և առողջութիւնը։ Այս գիրքը թարգմանուած է Մոսկուայի դրաքննական կոմիտէից։

Հրատարակութեան պահեստն է Օտտօ Ասպէրգէրի ֆօտ Լայպցիգում (Otto Asperger Leipzig) (Սաքսոնիա)։ Օտարքաղաքացիները ճանապարհածախս չեն վճարում։

(Մ.) 52—33

ԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԵԼՔՈՅԵԱՆԸ, ԿԱՐԱՊԵՏ, ԱՐՇԱԿ ԵՒ ԱՐՏԱՇԵՍ ՍԻՄԷՕՆԵԱՆՑՆԵՐԸ խորին վշտով յայտնում են առաջինն իւր ամուսնու, իսկ միւսներն իրենց հօր՝ ՄԻՔԱՅԷԼ ԱԻԱՏ ՔԱՀԱՆԱՅ ՍԻՄԷՕՆԵԱՆՑԻ մահը և խնդրում են բարեկամներին ու ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեանը, որ տեղի կունենայ չորեքշաբթի, հոկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 3-ին սեփական տնից՝ Բեթղեհէմի փողոցի վրայ, Կուսանաց մենաստանի հանդէպ, դէպի Մողնու եկեղեցին։ Թաղումը կը լինի յաջորդ օրը, հոկտեմբերի 12-ին, առաւօտեան ժամը 10-ին։

1—1

Դուբս եկաւ մամուլի տակից

ՅԱՐ. Յ. ՄԱՐԱԳԼԵԱՆԻ

„ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ“

Վիպական պրուիլիոնը

Ծախւում է հայ գրավաճառանոցներում։

Գինն է 20 կ.

10—1

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ

„ԿՈՎԿԱՍ“

ՋԻՆԱԳՈՐԾԱՐԱՆԸ

Ընդունում է պատուէրներ

ՆՈՐ ԶԵԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾ

Թէ կեդրոնական (центральнаго боя) և թէ լյնովի (тюмпольное) հրացանների, նոյնպէս մօնտէկրիստօների։

Նաև ընդունում է ատրգունակ համար ամեն տեսակ տարճանակներ. վերոյիշեալ է Հին հրացանները ՆՈՐ ձևերի (системa)։

Զինագործարանը գտնւում է Սալդատսկի բազարում, Կուզնեցկի փողոցի վրայ։

Հասցէն նամակների և հեռագիրների համար՝ Тифлисъ, Алоянцъ.

X—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է աշակերտներին ՎԵՐԱԲՐՆՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ պետական և հայոց միջնակարգ ուսումնարաններում. նոյնպէս ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ գիմնազիա, ընկերական ուսուցչարան, կոլեգիական հօրպատ և Ներսիսեան ուսուցչարան։

Ուսումնարանում ընդունւում են ԵՐԹԵՒԵԿՆԵՐ, ԿԻՍԱԹՇԱԿԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԹՈՇԱԿԱՒՈՐՆԵՐ։

Երթևեկները վճարում են ուսման վարձ ամսական 10 րուբլի, կիսաթոշակաւորները ուսման և ճաշի համար 20 րուբլի. իսկ թոշակաւորները բոլոր ծախսերի համար—30 րուբլի։

Ընդունելութիւնը լինում է նոյն իսկ այժմեանից։

Հասցէն. Тифлисъ. Гановская ул., № 15. (Сололаки).

20—9

ՆԵՍՏԼԷԻ ԿԱԹՆԱՅԻՆ ԱԼԻՒՐ. գինն է 1 ր. 15 կ.

Ծծկի երեխաներին սնուցանելու համար

Մայրական կաթի տեղ գործածելու համար մինչև այժմ հնարուած միջոցներից ամենալաւն է։ Դա սննդաբար է և դիւրամարս, և ամեն մի տղայ սիրով ընդունում է։

ՈՐՊԷՍ ԿԵՐԱԿՈՒՐ առաջարկում եմ և ԹՈՒՅԼ ՍՏԱՄՈՔՍ ունեցող ՀԱՍԱԿԱՒՈՐՆԵՐԻՆ

ՆԵՍՏԼԷԻ ՅԱՄԱՔԱՅՐԱՆ ԿԱԹ. գինը 85 կ.

Վաճառւում է Թիֆլիսում՝ դեղատնային ապրանքների վաճառման Ալիքսան Ընկերութեան, Ա. Մուրինեանի, Ա. Պօպովի, Գ. Ա. Պօպովի, Վ. Գրիմմակի և Ռուսիայի բոլոր դեղատներում, դեղավաճառանոցներում և մանրավաճառների մօտ։

ԳԼԽԱՒՈՐ ԴԷՊՕՆ Պետերբուրգ, Սադովայա, 3. ԱԼ. ՎԵՆՑԷԼԻ ՄՕՏ Մօսկուա, Պօկրովկա, Եգորովի տանը։

ԲՈԼՈՐ ՌՈՒՍԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՄԻԱԿ ԳՈՐԾԱԿԱԼ *Александръ Венцель*

Պատիւ ունիմ հասարակութեան հաղորդելու, որ ես պատասխանատու եմ միայն այն տուփերի համար, որոնց վրայ կպցուցած կինք և Աւէքսանդր Վենցէլի՝ ամբողջ Ռուսիայի համար իմ միակ գործակալի, ստորագրութիւնը կայ։

ՀԷՆՐԻԽ ՆԵՍՏԼԷ, ՎԷՎԷՑՈՒՄ (Զուիցերիա)։

(Ц. 10713) 12—8

Дозволено цензурою. Тифлисъ, 10-го Октября 1889 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Чихачова